

3158

616.9
4-28

2010

2002

616.002.6

Ա-28

№ 4.

ՎԱՀ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Կ. Ս. Մ

ՍԻՖԻԼԻՍ,

ՆՐԱ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐ,

ԹԷ ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԻԵԼ ԵՒ ԲԺՇԿԻԵ
ՆՐԱՆԻՑ:

Թարգմանութիւն ռուսերէնից



Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս

Տպարան Մ. Դ. Ռոտինանցի
Տիպոգրաֆія М. Д. Ротиніанца. Гол. пр. д. № 41.

1896

616.9
4-28
ՄՎ
№ 4.

ԱՅԱ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

61

Կ. Ա. Մ

ՍԻՖԻԼԻՍ,

ՆՐԱ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԽՈՐՃՈՒԹՆԵՐ,

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԻԵԼ ԵՒ ԲԺՇԿԻԵԼ
ՆՐԱՆԻՑ:

359996
359996

140

Թարգմանութիւն ռուսերէնից

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. Ռոտինանցի

Տիպոգրաֆія М. Д. Ротиніанца. Гол. пр. д. № 41.

1896

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Այս գրքով կը կարդալու ց լետոյ ամեն մարդ
կ'իմանայ, թէ այն հիւանդութիւնը, որի մա-
սին այստեղ խօսւում է, փոխւում է մի մար-
դուց միւսին ոչ թէ միայն անառակ կեանք
վարելուց, այլ և ուրիշ կերպ. Ուստի և անի-
րաւացի է կարծել, թէ ով ունի այս հիւան-
դութիւնը, նա վարել է անառակ կեանք:
Յաճախ պատահում է, որ մէկը բոլորովին
տանջւում է ուրիշի մեղքերի շնորհիւ: Դա
պատահում է ոչ միայն այստեղ գրած հի-
ւանդութեան ժամանակ, այլ և ուրիշ դէպ-
քերում: Եթէ մինչեւ անգամ մարդ ինքը լի-
նի իր հիւանդութեան պատճառը, դարձեալ
անդիմութիւն և անխղճութիւն կը լինի նա-
խատել նրան կամ արհամարհել դրա համար:
Մենք իրաւոնք չունենք դատապարտել և
նախատել ուրիշին, որովհետև մեր սեփական
կեանքը լի է չարիքներով: Եւ եթէ ոչ այս
յանցանքով, մի ուրիշ գործով մեղանից ամեն
մէկը մեղաւոր է Աստուծոյ և մարդկանց ա-
ռաջ: Մարդուս կեանքը այնպէս է կազմա-
կերպւած, որ ամեն մի Աստուծոյ կամքին

Дозволено цензурою. Тифлисъ, 21 Апрѣля 1896 г.

Հակառակ քայլ ամեն մի մարդկալին ընութեան օրէնքների խանդարելը, ինքն ըստ ինքեան պատիմ է տռաջ բերում:

Բնութիւնը իր գործն է կատարում, իսկ մեզ մնում է միայն սիրել և խզնալ տանջողներին:

Նա, ով իր կամ ուրիշի մեղքով վարակում է այս սարսափելի հիւանդութիւնից, կրում է սաստիկ տանջանքներ; Աստուած մեզ պատփրել է սիրել անբաղդներին և օգնել նրանց, միսիթարել, նալաստել նրանց առողջանալուն և աշխատել, որ հիւանդութիւնը չ'անցնի ուրիշին: Հենց դրա համար էլ մեզ խիզ ու բանականութիւն է տռած, որ օգնենք միմեանց: Խղզը դրդում է օգնել, իսկ բանականութիւնը ցոյց է տալիս, թէ ինչպէս աւելի լաւ կարելի է օգնել:

Եւ երբ մենք օգնութեան հասնենք մեր եղբայրներին նրանց գժեաղգութեան ժամանակ, երբ խզնալով նրանց, մոռանանք մեր հանդսառութիւնը և չը զգւենք հիւանդի ոչ մի ահօելի պատկերից, մենք կատարած կը լինենք մեր պարտքը և հասած կը լինենք ամենաբարձր երջանկութեան:

Այս ամ խոսք Ֆիլադելֆիայի ուղարկած առաջարկ առաջ առաջ ամսի անդի թագավորական գույն ուրբան Ֆիլադելֆիայի բարձր առաջարկ առաջ առաջ ԿԱՄ ՍԻՓԻԼԻՍ *

Թէ ի՞նչ է լինում, եթք մարդիկ ուշաղութիւն չեն դարձնում այդ հիւանդութեան վրայ:

Համարեա ամենքը գիտեն, թէ կայ մի սարսափելի վատ հիւանդութիւն, որը մի մարդուց վոխուում է միւսին, եղծում, տգեղացնում է նրա երեսը, որից մարմինը դուրս է տալիս, բերանը ու կոկորդը ցաւում, բացում են վէրքեր և ուկրները փթում:

Ալգոխի հիւանդը առհասարակ տաճօթից կարեաց չափ ծածկում է իր հիւանդութիւ-

*) Ժողովրդական լեզով՝ քիվու, Փրանկ զամատ:

նը, չըմտածելով, թէ դրանով նա ինչքան վնաս է բերում ուրիշներին: Նատ քչերը գետեն, թէ ինչպէս պէտք է պահպանել իրեն այդ ցաւից, թէ թնչպէս ճանաչել այդպիսի հիւանդութիւն ունեցողին, իսկ գլխաւորը, ինքը հիւանդը շատ ժամանակ չը գիտէ և չէ մտածում, թէ ինչքան վնասակար է նա միւսների համար, թէ ինչքան վնասներ կարող է պատճառել, վարակելով իր շրջապատողներին: Ուստի և նրանք, որ ունեն այս հիւանդութիւնը, ծածկում են և չեն բժըշկում, մեղանչում են իրենց մերձաւորների դէմ: Այդպիսի հիւանդը, որպէսզի ցոյց տայ, թէ ինքը առողջ է, 'ի հարկէ, ուտում է և խմում բոլորի հետ, վարում է ամուսնական կեանք, բայց դրանով նա առաջ վարակում է իր հարազատներին, յետոյ և ուրիշներին: Մարդուց հիւանդութիւնը փոխւում է կոնցը, կնոջից մարդուն, ծնողներից որդիներին, իսկ որդիները դարձեալ վարակում են ուրիշ երեխաներին—և տարածում է վատ հիւանդութիւնը ամբողջ գիւղի մէջ և շրջակալքում: Կան ամբողջ գիւղեր, որտեղ դժւար է գըտնել մի առողջ մարդ. երեսները ալանդակ, իրենք ոյժից սպառւած, որդիները ծնուում

են կամ մեռած կամ թոյլ կազմւածքով և շատ ժամանակ այդպիսի գիւղերում առաջանում են խենթեր: Եւ այդ բոլորը նրանից է, որ մէկը, պատահմամբ բերելով այդ վատ հիւանդութիւնը, մի կողմից ինքը չէ պահպանուում, միւս կողմից ուրիշները չեն իմանում դրա մասին, և այդպիսով հիւանդութիւնը տարածում է նրանից ամբողջ գիւղի մէջ:

Աւելի լածախ այդ հիւանդութիւնը տարածում է այն մշակների կամ զինուրների շնորհիւ, որոնք զանազան մեծ քաղաքներ աշխատանքի են գնում: Պատահում է, որ զինուրները և մշակները ուտում և խմում են ուրիշ անձանօթ մարդկանց հետ: Եթէ դժբաղդաբար այդ անձանօթներից մէկը հիւանդ է, նա վարակում է զինուրին կամ մշակին—և ահա տարածում է ախտը: Յանկարծ տեսնում ես՝ բոլորովին առողջ ընտանիքի մէջ մէկը հիւանդացաւ, հիւանդանում է և կինը, երեխաները և միւսները, և այդպիսով երեխմն մի մարդու շնորհիւ կորչում են շատերը:

Վատ հիւանդութիւնը մեծ անբաղդութիւն է պատճառում հասարակ ժողովրդին,

բանորի համար հիւանդանալը շատ ծանրէ,
նա ժամանակ էլ չունի ցաւովը զբաղւելու.
մանաւանդ որ երբ այդ հիւանդութիւնը կը-
պաւ, էլ շուտ ձեռք չի վերցնի: Նատ ժա-
մանակ, երբ հիւանդը իր ժամանակին չէ
բժշկում, նա ամբողջ կեանքը մինչև ծերա-
նալը տանջում է և մեռնում մեծ տաքա-
րանքների մէջ: Իսկ երիտասարդ, ամուր
կազմւածքի տէր մարդիկ սակաւ են մեռ-
նում այդ հիւանդութիւնից, նրանք նոյն իսկ
շատ քիչ են պառկում: Կամ մի տեղն է ցա-
ւում, կամ միւսը և միշտ գանգատում են,
թէ ոչ մեռնում են և ոչ առողջանում:

Բայց ինչքան ամօթ է համարւում, երբ
մէկը ունի այս հիւանդութիւնը, մանաւանդ
եթէ նա աղջիկ է: Դիւզացիների մէջ Աս-
ւած չ'անէ, եթէ մի վատ լուր տարածւի մի
որ և է աղջկալ մասին. վախենում են պսակ-
ւել նրա հետ, կամ պսակւելոց լետոյ էլ
շարունակ անարդում են նրան, իսկ եթէ նա
իսկապէս հիւանդ է, այդ ժամանակ նրա օրը
սև է գառնում:

Չեն մտածում անմիտները, որ յանդիմա-
նութիւններով և վատ վարւելով աւելի
դժւարացնում են գործը, չըգիտեն նոյն-

պէս, որ աչդպիսի հիւանդին կարելի է առող-
ջացնել, չըգիտեն, որ հեշտ է պահպանել
նրանից և ալդպիսով ամեն քն էլ առողջ կը-
մնան, իսկ ընտանեկան խաղաղութիւնը չի
խանգարւի: Այս սարսափելի հիւանդութեան
դէմ կան գեղեր, և եթէ իր ժամանակին սկը-
սեն բժշկւել, կարելի է կամ բոլորովին առող-
ջանալ, կամ լինելուանվնաս ուրիշների հա-
մար, և գոնէ մի առ ժամանակ լինել բաւա-
կանին առողջ:

II.

Թէ ի՞նչպէս է անցնում այդ հիւանդութիւնը
մէկից միւսին:

Իսկ ի՞նչպէս է կպչում այդ հիւանդու-
թիւնը:

Նա պատւաստում է, ինչպէս ծաղիկ հի-
ւանդութիւնը. միայն թէ ծաղիկը պատւաստ-
ում է զիտմամբ, իսկ այս հիւանդութիւնը
անգիտակցաբար:

Ծաղիկը պատւաստում են ալսպէս. վերց-
նում են հորթի կամ երեխալի ծաղկի վէր-
քից ժարախը, ծակում են առողջ երեխալի

Ճեռքի կամ ոտքի կաշին և թարախը լցնում
են այդ քերծւածքի մէջ: 5—7 օրից յետոյ
այդ քերծւածքի տեղում յալտնում են մեծ
պզուկներ, վէրքեր: Եթէ այդ վէրքերից թա-
րախը վերցնենք ու պատւաստենք մի ուրիշ
երեխայի, նրա Ճեռքի վրայ էլ դուրս կը գան
պզուկներ:

Այդ պզուկները չորանում և անհետա-
նում են, մնում են միայն ծաղկի հետքերը:
Այսպէս պատւաստած երեխաները սակաւ են
վարակում ծաղկից:

Միենյնը լինում է, երբ մարդ վարակ-
ում է սիֆիլիսից. վատ վէրքից ժահը (թա-
րախը) ընկնում է առողջ մարդու քերծւած-
քի մէջ և այնուեղ յայտնում է ցաւը. միայն
ոչ թէ պզուկ է դուրս գալիս, այլ կլոր
վէրք, որի շուրջը շատ ամուր է լինում: Զա-
նազանութիւնը նոյնպէս և նրանում է, որ
վատ հիւանդութեան վէրքը յայտնում է ոչ
թէ 5—7 օրից յետոյ, այլ 2—6 շաբաթւայ
ժամանակամիջոցում: Խսկ ամենագլխաւոր զա-
նազանութիւնը այն է, որ ծաղիկը կտրելուց
յետոյ միայն պզուկները մի փոքր ցաւում են,
և երեխան առողջ է, իսկ վատ հիւանդու-
թեան ժամանակ առաջին վէրքը շուտ չէ

անցնում. վարակը մտնելով արիւնի մէջ, զա-
նազան ցաւեր է պատճառում: Ցաւում են
կոկորդը, բերանը և ոսկրները: Նատ ժամա-
նակ միայն երկար հիւանդութիւնից յետոյ է
հասկանում հիւանդը, կամ ուրիշներն են ա-
սում նրան, թէ ինչով է նա հիւանդ: Յա-
ճախ չեն նկատում նոյնպէս և առաջին վէր-
քը, որովհետեւ նա ոչ ցաւում է, ոչ էլ քոր
գալիս: Միենոյն ժամանակ իրենք հիւանդ-
ները ասում են, որ ոչ մի վէրք չէ եղել.
բայց այսպէս են ասում այն պատճառով, որ
վէրքը ցաւ չէ պատճառել, իսկ բանւոր մար-
դը ժամանակ չունի նշմարելու ամեն մի չըն-
չին բան. այնուամենայնիւ այդ վէրքը եղել
է, գուցէ և շատ փոքր, բայց եղել է, առանց
նրան այս հիւանդութիւնն էլ չէր կարող
լինել:

Մարդու մարմնի որ տեղերը աւելի շուտ
են վարակում այս հիւանդութիւնից:

Նա կարող է պատւաստել մարդու մար-
մնի ամեն տեղերում. Եթէ լինի քերծւածք
և եթէ պատահմանը ժահը ընկնի նրա մէջ:
Եթէ մարդուց է անցնում կնոջը, կամ կնո-
ջից մարդուն, այդ դէպքում նախ և ա-
ռաջ սկսում են ցաւել նրանց սեռական

անդամները, որովհետև սեռական անդամների վրայ աւելի յաճախ են յալտնւում վերքեր, որոնց ժահը, թափւելով, վարակում է առողջ մարդուն կամ կնոջը ամենափոքը քերծւածքի միջոցով։ Աւելի ևս յաճախ գարակում են գիւղերում շրթունքների և բերանի միջոցով։

Ահա թէ ինչպէս եթէ հիւանդի շրթունքների վրայ կամ բերանի մէջ կան վերքեր, նրանց ժահը մնում է բաժակների, գդալների, երեսսրբիչների կամ ծծի պտուկների վրայ, որտեղից և անցնում է առողջ մարդկանց շրթունքներին կամ բերանը։ Իսկ շըթթունքների վրայ կամ բերանում համարեամիշտ լինում են քամուց կամ խիստ տաքութիւնից առաջացած ճաքած տեղեր, ուր և ընկնում է ժահը և այդպիսով հիւանդութիւնը կպչում է նրան։

Ալդ հիւանդութիւնը անցնում է նոյնպէս և համբուրի միջոցով։ Մայրելը շատ հեշտութեամբ վարակում են իրենց որդիներին համբուրի, ծծի միջոցով և ալին։ Եթէ մանուկի շրթունքների վրայ կան վատ հիւանդութեան խոցեր և նա ծծում է առողջ կնոջ, կամ մինչև անդամ իր մօր առողջ կաթը, այն

ժամանակ ծծի վրայ կարող են յարտնւել խոցեր և կինը կը վարակւի։ Պատահում է նոյնպէս, որ ծծմալը կանալք վարակում են օտար երեխաներից և իրենք էլ վարակում են առողջ երեխաներին։

Պառաւ կանալք մի վատ սովորութիւն ունեն—լեզով աչքից չոփը դուրս հանել այդպիսի կանալք կարող են թէ իրենք վարակւել և թէ ուրիշներին վարակել։

Պէտք է իմանալ, որ ոչ մի ժամանակ առանց քերծւածքի կամ վերքի վարակը չէ կարող անցնել արիւնի մէջ։ Ուստի եթէ երբեմն ասում են, թէ իբր վարակւելը սուտ բան է, թէ ապա ինչո՞ւ ես կերել, խմել և համբուրել եմ վատ հիւանդութիւն ունեցողի հետ, բայց և ալնպէս առողջ եմ, իմացէք, որ միայն յաջող գէպքն է ազատել նրան ցաւից, այն է որ ժահը ոչ մի անդամ չէ ընկել նրա արիւնի մէջ։

Խստակութիւնը և մաքրասիրութիւնը շատ նպաստում են չըվարակւելուն։ Եթէ մինչև անդամ ժահը ընկնի մէկի շրթունքների վերայ և նա խսոր շրթունքները լւանայ, նա առողջ կը մնալ։ Իսկ եթէ նա լինի ուշադիր,

չ'ուտէ և չըխմէ անլւայ ամանից, աւելի ևս
կարող է պահպանւած լինել:

Ամենագլխաւորը նա է, որ հիւանդը իր
շուրջը միշտ մաքրութիւն պահպանի. օրի-
նակ՝ նա չըպէտք է ուտելուց և խմելուց
յետոյ թողնէ ամանը առանց լւանալու: Աւե-
լի լաւ կը լինի, եթէ նա ունենայ իր հա-
մար առանձին ամանեղէն, այս դէպքում շա-
տերը կարող են ազատ մնալ վարակւելուց:

III.

Հիւանդութեան երեք աստիճանները:

Վատ հիւանդութիւնը ոչ ամեն ժամա-
նակ միատեսակ վարակիչ է: Որպէսզի լաւ
հասկանանք, թէ Երբ է նա աւելի վտան-
գաւոր լինում և Երբ է հարկաւոր աւելի շատ
զգուշանալ, պէտք է իմանալ, որ այդ հի-
ւանդութիւնը ունի երեք աստիճան, առա-
ջին, երկրորդ և երրորդ:

Հիւանդութեան առաջին աստիճանը:

Սիֆիլիսի առաջին աստիճանը համարւում
է այն դրութիւնը, երբ լայտնուում է առա-

ջին վէրքը: Մարդը գեռ բոլորովին առողջ է
լինում, միայն թէ նրա շրթունքի վրայ, բե-
րանում, սեռական անդամների վրայ կամ մի-
ուրիշ տեղում երևում է վէրք մօտաւորա-
պէս սիսեռի չափ, երբեմն էլ աւելի մեծ:
Վէրքի տակը և շուրջը շատ կոշտ են լի-
նում և նրա մօտերքում գտնող խուլերը
ուռչում են, բայց վէրքը ոչ ցաւում է, ոչ
էլ քոր գալիս: Միայն կեղտից և անմաքրու-
թիւնից նա կարող է ցաւել. այս դէպքում
արդէն վէրքը ալրում և ծակում է, այնպէս
որ գժւար է չըզգալ: Այդպիսի վէրքի ժահը
շատ վարակիչ է. նրա մի կաթիլը կարող է
վարակել տասնետկ մարդկանց:

Նատ սակաւ է պատահում, որ հիւան-
դութեան առաջին աստիճանում լինի ոչ թէ
մի, այլ երկու վէրք, գրեթէ միշտ լինում է
մի հատ:

Այդ վէրքը լաւանում է մի շաբաթից կամ
մի ամսից յետոյ, երբեմն էլ աւելի ուշ. նրա
տեղը մնում է միայն մի սպի: Կարծես թէ
հիւանդութիւնը բոլորովին անցտւ, բայց ոչ,
բանը դրանով գեռ ևս չէ վերջանում.

Հիւանդութեան երկրորդ աստիճանը.

Երբեմն պատահում է, որ դեռ առաջին վէրքը չը ծածկւած կամ չ'առողջացած, լաւ-տնում են նորանոր ցաւեր, դա արդէն հիւանդութեան երկրորդ աստիճանն է։ Այս դէպքում ցաւում է ոչ թէ մարմնի մի տեղը կամ մի մասը, այլ համարեա ամբողջ մարմինը։

ա) Ամենից առաջ մարմնի զանազան տեղերում յալտնում են խուլեր. կոնատակերում, աճուկներում և պարանոցի վրայ։ Այդ խուլերը միշտ կարելի է չօշափել հիւանդութեան երկրորդ աստիճանում։ Վարակը, անցնելով արիւնից, բուն է դնում նրանց մէջ և արդէն շուտ չի դուրս գալ։

բ) Հիւանդը դողացնում է, իսկ յետով ամբողջ մարմինը դուրս է տալիս, կամ ծածկում պղուկներով։ Այդ պղուկները նոյնպէս չեն ցաւում և չեն կոկում։

գ) Հիւանդը հետզհետէ զգում է, որ կերակուրը դժւարութեամբ է կուլ գնում, երբեմն էլ կոկորդը ցաւում է։ Կոկորդում, լեզվի վրայ և լեզվի ետեւում յալտնում են նոր սոլիտակագոյն խոցեր փոքրիկ նկանակների ձեռվ։

դ) Ծծերի տակ, շրթունքների, սեւտկան անդամների վրայ և վայրարկւի (արտաթորելու տեղը) մօտ գուրս են գալիս կարմրագոյն խոցեր, բայց ոչ թէ մէկ մէկ, այլ միանդամից մի քանի հատ։ Նրանք ջրակալում են և նրանց միջից՝ գուրս է գալիս ժահը, որը նոյնպէս վարակիչ է։ Այսպիսի խոցերով ծածկում է ևս կոկորդը, ուստի և հիւանդը սկսում է խոալ, թէկ ցաւ չէ զգում։

ե) Միւնոյն ժամանակ հիւանդին նեղացնում է գլխացաւը, ոսկրացաւը, մանաւանդ գիշերները։ Ցերեկը, երբ հիւանդը ոտքի վըրայ է, նա ցաւ չէ զգում, բայց երբ անկողին է մանում ու մի փոքր տաքանում — անտանելի ցաւ է սկսում։

զ) Ուսաւել ցաւում է ոլոգը և ճակատը, այնպէս որ երբեմն այդ ցաւերով կարելի է իմանալ, որ մարդ ունի վատ հիւանդութիւն։

է) Հենց այդ ժամանակն էլ հիւանդի մազերն թափում են ու եղունգները ճարթում։

ը) Պատահում է, որ այս աեսակ հիւանդների տեսողութիւնը թուլանում է։

Այս երկրորդ աստիճանում հիւանդը կառող է բոլորավին առողջանալ, մանաւանդ

1/008
35-996

եթէ բարձի թող չ'անի և սկսի բժշկւել իր
ժամանակին, համբերութեամբ կատարելով
բոլոր պարտականութիւնները: Պատահում է
և այնպէս, որ մարդ տակաւին չէ առողջա-
նում, կամ թէ նրա բնութիւնը այնպէս է,
որ առողջութիւնը վերականգնում է միայն
մի առ ժամանակ, իսկ մէկ, երկու ամսից
յետոյ, երբեմն մինչև անգամ մի ամբողջ
տարուց յետոյ հիւանդութիւնը դարձեալ
կրկնուում է: Իսկ եթէ հիւանդը ամենաին
չէ բժշկում, կամ եթէ բժշկութիւնը յաջող
չէ լինուած, նրա հիւանդութիւնը անդադար
շարունակում է ամիսներով և տարիներով,
մինչև որ չըսկոի երլուրդ աստիճանը: Այս
դէպքում արդէն բժշկւելն էլ անհամեմատ
դժւար է, ցաւն էլ աւելի շատ է:

Սիփիլիսի երկրորդ աստիճանը չափազանց
վարակիչ է, մանաւանդ այն պատճառով, որ
հիւանդը կարծես բոլորովին առողջ է, աշ-
խատում է միւսների հետ, միայն թէ նա
խռացնում է և նրա մարմնի վրայ տեղ տեղ
գուրս են գալիս խոցեր:

Նատ անգամ նա ինքը ուշադրութիւն չէ
դարձնում, ուրիշներն էլ չեն զգուշանում,
այն ինչ նա ամեն մի ըսպէ կարող է վարա-

կել իր մերձաւորներին: Իսկ որպէս զի մարդ
ազատ լինի այդպիսի մի յանցանքից, նա
պէտք է ինքն իր վրայ ուշադրութիւն
դարձնի:

Հիւանդը պէտք է ուշադիր լինի երբ
զգում է մի չնչին ցաւ, մինչև անգամ եթէ
հաստատ ըլդիտէ, թէ ինչով է հիւանդ:
Այդպիսիները պէտք է գործ դնեն ամենա-
մեծ ուշադրութիւն, եթէ միայն ունեն գէթ
չնչին երկիւղ առ Աստւած, պէտք է թող-
նեն ամուսնական կեանքը, ունենան ամեն
ինչ առանձին իրենց համար, օր՝ երեսսրբիչ,
ամանեղէն և ալլն, իսկ ամենագլխաւորը՝
հարկաւոր է բժշկւել:

Հէնց օր անցնեն նրա խոցերը, նա կա-
րող է դարձեալ ապրել միւսների պէս և նը-
րան չի տանջիլ այն միտքը, թէ նա դժբազ-
դացրել է իր ընտանիքը և իր մերձաւորնե-
րին: Բաւական չէ ալդ: Բացի նրանից, որ
նա անբազդացնում է իր հետ ապրողներին,
այդ հիւանդութիւնը կարող է տարածել և
նրանց վրայ, որոնք գեռ չեն ծնւել, և ահա
թէ ինչպէս. եթէ հայրը կամ մայրը ունի
այս հիւանդութիւնը, նրանց որդիները ծըն-
ուում են կամ մեռած, կամ արդէն հիւանդ

նոյն ցաւով, որից վարակւած են ծնողները։ Այդ երեխաների ոտքերի տակ և ձեռքերի տփի վրայ գուրս են գալիս փոքրիկ պզուկներ, որոնք նման են ալրւելուց առաջացած բշտերին, մարմնի վրայ ցանել են երեւում, իսկ շրժունքները, բերանը և վալրարկուն (արտաթորելու տեղը) ծածկւած են լինում այդ հիւանդութեան վերքերով։ Երեխան նըւազ է լինում, ամբողջ ժամանակ լաց է լինում—մարդու մեղքն է գալիս նրա վրայ նայելիս։ Եթէ ալդպիսի երեխան ապրի, ժամանակով նրա մարմնի վրայ գուրս կը գան վերքեր, ոսկըները կըսկսեն փթել, ինչպէս դա պատահում է հիւանդութեան երրորդ աստիճանում։ Իմում է և այսպէս. երեխան ծնւում է բոլորովին առողջ, մինչեւ անգամ ալդպէս հասնում է մեծ հասակի, երբ յանկարծ հիւանդանում է։ Մարմնի մի որ և է տեղը երեւում է բիշա, որը հասնում է և անհետանում, իսկ նրա տեղը յալտնուում է նախ մի վերք, յետոյ մի ուրիշը, տալա երրորդը, չորրորդը... և երեխայի առողջութիւնը հետզհետէ սկսում է աւելի և աւելի վատանալ։ Կամ թէ գուրս են գալիս պզուկներ, որոնք փոխւում են խոցերի և լցւում

են ժահըով։ Ծնողները գարմանում են, թէ որտեղից է երեխան ստացել հիւանդութիւնը։ Հիմայ նրանք երկուսն էլ առողջ են, բայց նրանց մտքովն էլ չէ անցնում, որ դրանից 10—15 տարի առաջ, երբ ծնւել է երեխան, իրենցից մէկը ունեցել է այդ հիւանդութիւնը։ Ցաւը փոխւել է նրանից երեխային և երկար ժամանակ թագնւելուց յետով երեւան է եկել։ Միայն ծնողներին լաւ հարց ու փորձ անելուց կը յալտնւի, թէ բանը ինչումն է։

Պատահում է նոյնպէս, որ երեխան ըուլորովին առողջ է լինում, միայն թէ կամ խելքից թեթև կամ լուռ է լինում և չէ խօսում, կամ թէ տանջուում ընկեցիկ հիւանդութիւնով։ Դա ևս պատահում է ծնողների վատ հիւանդութիւնից։ Թէև տիտը երեխամի վրայ արտաքսուստ չէ նկատում, բայց նա անբաղդացնում է նրա ամբողջ կեանքը։ Ահա թէ ինչքան սարսափելի է այդ հիւանդութիւնը։ Նա դժբաղդացնում է ոչ միայն չափահասներին, որոնք կարող են ուշադիր լինել և պահպանւել, այլ և անմեղ երեխաներին։

Հիւանդութեան երրորդ աստիճաննը:

Վատ հիւանդութեան երրորդ աստիճաննը զգում է թէ ինքը հիւանդը և թէ նրա մերձաւորները:

Նա երեան է գալիս վարակւելուց յետոյ զանազան ժամանակամիջոցում, ձէկի վրայ շուտ, միւսի ուշ: Այնաքիչը նա յատնուում է վարակւելուց 6—8 ամսից, յաճախ և մի քանի տարուց յետոյ: Միայն երեխայական հասակում է լինում, որ երկրորդ աստիճաննից յետոյ շուտով սկսում է երրորդ աստիճանը:

Եթէ հիւանդը բժշկւելուց 2—3 տարի անցած իրեն բոլորովին տողջ է զգում, կը նշանակէ նա միանդամայն բժշկւել է. իսկ առանց բժշկութեան նա երբէք իրեն առողջ չէ կարող համարել, եթէ մինչև անդամ անցնեն աւելի շատ տարիներ և հիւանդութիւնը չըլայտնւի:

Երրորդ աստիճանում հիւանդը աւելի շատ ցաւելի է զգում:

ա) Հիւանդութիւնը սկսում է յաճախ նրանով, որ դլախ, ձեռքերի, ոտքերի կամ կուրծքի վրայ դուրս են գալիս պզուկներ: Այդ պզուկները չեն ցաւում, միայն կարմը-

բում, կակզում և լցուում են ժահրով և ապտ ձեղքւում են: Նրանց տեղը մնում են վէրքեր, որոնք դժւարութեամբ են անհետանում, մանաւանդ եթէ մաքուր չըպահել: Այդ վէրքից սակաւ է լինում միայն մի հատ, յաճախ դուրս են գալիս մեծ քանակութեամբ ձեռքերի և ոտքերի վրայ: 2—3 մօտակայ պզուկներ ձեղքւում են և միանում: Երբեմն էլ նրանք տարածում են ամբողջ սրունքի վրայ—մարդ սարսուռ է զգում նայելիս:

բ) Բացի այդ պզուկներից երրորդ աստիճանում լինում է, որ հիւանդի մարմնի վըրայ դուրս են գալիս և փոքրիկ պզուկներ: Այդ պզուկները ճեղքւում, թրջւում և խոցուում են: Երբեմն անցնում է 5—10 տարի, բայց նրանք չեն անհետանում. Հները անցնում են, նորերը դուրս են գալիս: Այդ պիսի պզուկները աւելի շատ լինում են հիւանդի ձեռքերի և ոտքերի վրայ երբեմն ծածկում են մարմնի ամբողջ կէսը և, թէև ոչ մի ցաւ չեն պատճառում, այնուամենայնիւ հիւանդութիւնը սաստիկ է:

գ) Միւնոյն ժամանոկ ոսկրները սկսում են ուռել և նրանց վրայ դուրս են գալիս ամուր գնդիկներ: Փթում են մարմնի և երե-

սի ոսկըները, նոյնպէս կռճինները և քիմքը,
իսկ քիմքը վայր է ընկնում: Նախ հիւանդը
ստանում է հարբուխ, քթից և բերանից
վատ հոտ է փչում, իսկ յետոյ սկսում են
թափել ոսկը կտորները:
Դ) Բերանի և կոկորդի մէջ նոյնպէս
դուրս են գալիս վէլքեր: Սարսափում է
մարդ, երբ նայում է այդպիսի հիւանդի
վրայ:

Ե) Ցաւը տարածւում է և փորոտիքում:
Լեարդը ուռչում է, կուրծքը ցաւում է, տան-
ջում է հազն ու փորկապութիւնը: Հիւանդը
ուժելու ախորժակ չէ ունենում, աչքերը և
ականջները ցաւում են, նա կուրանում և
խլանում է: Ուղեղի մէջ դուրս են գալիս
պզուկներ, որոնցից հիւանդը յաճախ խելա-
գարւում է:

Զըկալ ամբողջ մարմնի մէջ համարեա ոչ
մի տեղ, որտեղ այս հիւանդութիւնը չըկա-
րողանար մտնել: Ի հարկէ, ամենքն էլ այն-
պէս չեն հիւանդանում, որ ամբողջ մարմնի
վրայ մի առօղջ տեղ չըդտնւէր, բայց և այն-
պէս այդպիսի հիւանդները նիհարում ու մաշ-
ւում են, գիշերները չեն քնում և վերջ ի
վերջոյ մեռնում են մեծ տանջանքների մէջ

կամ ջրդողութիւնից (ջրջրուկից), կամ բարա-
կացաւից (ձլերքից) և կամ թոլլութիւնից:
Այդպիսի հիւանդները զարհութելի են:
Ամենքը հիւանդում են նրանցից, պաշտպան-
ում են, որպէսզի չըփարակւեն, այն ինչ նր-
բանցից հարկաւոր չէ վախենալ: Ուժք է ի-
մանալ, որ վատ հիւանդութիւնը վարակիչ է
միայն իր առաջին և երկրորդ աստիճաննե-
րում, երբ մարդ, կարծես, բոլորովին առողջ
է, իսկ երրորդ աստիճանում, երբ նրա հի-
ւանդութիւնը բոլորի համար պարզ է, հե-
ռանալ հիւանդից հարկաւոր չէ, նա արդէն
վտանգաւոր չէ: Ահա թէ ինչը չըդիտեն մար-
դիկ և, երբ հարկաւոր է պաշտպանել հի-
ւանդից, նրա հետ միասին ուտում և խմում
են, իսկ երբ ամբողջ վարակը դուրս է գնա-
ցել նրա մէջից, երբ նրա տանջանքները շա-
տանում են և երբ նրան հարկաւոր է օգնել,
այդ ժամանակ բոլորը քշում, հեռացնում են
նրան իրենցից, չեն տալիս նրան ոչ օթևան,
ոչ կերակուր, բայց թէ ինչո՞ւ են այդ անում
— մարդիկ իրենք էլ չըդիտեն: Այդպիսիները
շատ ժամանակ չեն վարակում նոյն իսկ ի-
րենց երեխաներին, երբեմն նրանց երեխանե-
րը ծնուռում են բոլորովին առողջ, իսկ երբեմն,

թէե թոլկագմուածքով, բայց ժարձեալ առանց վատ հիւանդութեան:

Այս ցաւի երրորդ աստիճանով հիւանդները բժշկում են մեծ դժւարութեամբ, բայց այնուամենայիւ, եթէ սկսեն բժշկւել, կարող են գոնէ մի առ ժամանակ առողջ լինել:

Միայն թէ նրանք պէտք է միշտ ուշադիր լինեն: Պէտքէ մինչև անգամ մի չնչին ներքին կամ արտաքին ցաւ զգալուս իսկոյն դիմեն բժշկին:

IV.

Թէ ի՞նչպէս է հարկաւոր խուսափել վատ հիւանդութիւնից եւ ի՞նչպէս ըժշկել նրանից:

Ուրեմն ի՞նչպէս արդ հիւանդութեան առաջը առնել, որ նա չըտարածւի ժողովրդի մէջ: Տարէց տարի նա աւելի և աւելի տարածւում է և դժւար է գտնել ամբողջ Ռուսաստանում դէթ մի անկիւն, որտեղ նա տարածւած չըլինի, այն ինչ շատ ժամանակ չէ անցել այն օրերից, երբ արդ հիւանդութեան մասին գիւղերում ոչինչ չըգիտէին:

Վատ հիւանդութիւնը բերել են Ռուսաստան օտար երկրներից մօտ 400 տարի սրանից առաջ: Ամենից առաջ նա տարածւեց միայն մեծ քաղաքներում: Երկար ժամանակ տարածւած էր միայն զինւորների և քաղաքացիների մէջ, որովհետև քաղաքներում մարդիկ աւելի վատ կեանք են վարում, քան գիւղերում: Ալգոխով նրանք վարակւում են վատ կանանցից և յետոյ իրենք վարակում են ուրիշներին. իսկ երբ սկսեցին ամեն տեղ ճանապարհներ շինել, երբ աւելի հեշտութեամբ էր կատարւում հաղորդակցութիւնը, վատ հիւանդութիւնը սկսեց տարածւել ամբողջ Ռուսաստանում: Հիւանդները օրէց օր աւելանում են, իսկ մարդիկ ուշադրութիւն չեն դարձնում: Եւ միայն Աստւած գիտէ, թէ ինչ կ'անէ ալդ հիւանդութիւնը վերջ ի վերջոյ, եթէ չըդադարէ տարածւել: Ուղիղ է, հիմայ սկսել են բժշկել աւելի շատերը, քան առաջ, բայց բժշկում են նրանք, որ արդէն հիւանդացել են և, շատ կարելի է, վարակել են մի քանի մարդկանց, իսկ հարկաւոր է գլխաւորապէս, որ վարակւողների թիւը կարելոյն չափ քչանալ: Միայն արդ ժամանակ կարելի է փչացնել չարիքը: Իսկ

որպէս զի հիւանդների թիւը պակասի, պէտք
է ամեն մէկը ուշագիր լինի գէպի ինքը և
դէպի միւսները: Յաւը յայտնւելուց յետու,
նախ պէտք է ինքը հիւանդը իմանալ իր հիւ-
անդութեան մասին, պէտք է հասկանալ,
թէ ինչքան վնասակար է նա միւսների հա-
մար, չ'ամաչէ, ըրծածիէ և չըխաբէ, լիէ ա-
ռողջ է: Եթէ հիւանդը ամաչում է իր հիւ-
անդութիւնից և գրանով շատերի անբաղ-
դութեան պատճառ է դառնում, կը նշանա-
կէ, նա չը գիտէ, թէ ինչ է իսկական ամօ-
թը: Ոչ մի ժամանակ ամօթ չէ մարդուս
համար, երբ նա անգիտակցաբար վատ հիւ-
անդութիւն է ստանում, ամօթ չէ նրան
տանջւել այդ հիւանդութիւնից, այլ ամօթ
է, երբ նա իր յիմարութիւնից դժբաղդաց-
նում է իր ընտանիքը, երեխաներին և բո-
լորովին: օտար մարդկանց: Դա արդէն ոչ
միայն ամօթ է, այլ և մեծ մեղք:

Վերջապէս չէ որ շատ դժւար բան էլ
չէ մի առ ժամանակ ունենալ առտնձին ան-
կողին, առանձին ամանեղէն, երեսսրբիչ և
այլն և կանոնաւոր բժշկւել: Յաւիտեան հիւ-
անդ չի լինի նա. կ'անցնեն բոլոր երկիւղա-

լի վէրքերը նրա վրալից և նա նորից առողջ
կը լինի: Անհրաժեշտ է միայն բժշկւել և ամենա-
խիստ մաքրութիւն պահպանել: Առողջ մարդկիկ նոյնպէս պէտք է ուշա-
գիր լինեն: Այս դէպքում դարձեալ հարկա-
ւոր է մաքրութիւն: Եթէ պատահմաժբ մարդ
լինում է օտարների հետ, նա չըպէտք է
ուտէ և խմէ առանց ուշագրութեան անմա-
քուր ամանեղէնից:

Ի՞նչ մի դժւար բան է լաւ լւանալ դդա-
լը կամ բաժակը, կամ թէ չըսրբւել ամեն
մի կեղտուս շորով, այն ինչ այդպէս մի չնչին
բանով մարդ կարող է պահպանւել մեծ վը-
տանդից: Նոյնպէս և, եթէ ընտանիքի մէջ
կայ մի հիւանդ, որի ցաւի մասին բոլորը գի-
տեն, դարձեալ հարկաւոր չէ նախատել կամ
վատաբանել նրան, հարկաւոր չէ մեղադրել
նրան, այլ պէտք է տալ նրան առանձին
անկողին, ամանեղէն, սպիտակեղէն, մինչև
որ նա բոլորովին առողջանայ:

Հիւանդին նախատելը և անարգելը: Նոյն-
պէս մեծ մեղք է, որովհետեւ առանց այդ էլ
նա տանջւում է: Երբ մի որ և է ընտանիքում լայտնւում

է վատ հիւանդութիւնը, ամենքն էլ պէտք
է շատ զգոյշ լինեն. մի փոքր ցաւ զգալիս
իսկոյն և եթ բժշկին դիմեն, որովհետեւ ինչ-
քան շուտ ալդ հիւանդութեան առաջը առ-
նեն, այնքան լաւ է: Իսկ եթէ բանից զուլու-
գայ, որ բժշկին դիմելը իզուր էր, որ ոչ մի
հիւանդութիւն չըկար, ոչինչ, կորուսող մեծ
չի լինի:

Յաճախ ինչպէս իրենք հիւանդները, նոյն-
պէս և նրա բարեկամները չեն կարողանում
հասկանալ թէ ինչ ցաւ է, ասում են, թէ
ջրջրուկ է, մրսել է, այն ինչ բոլորովին ու-
րիշ բան է:

Ջրջրուկը շատ ժամանակ ընդունում են
վատ հիւանդութեան տեղ, իսկ վատ հիւան-
դութիւնը ջրջրուկի տեղ:

Պէտք է իմանալ, որ ջրջրուկը վարակիչ
չէ, այսինքն չէ փոխում մի մարդից միւ-
սին: Յաճախ ջրջրուկով հիւանդանում են
երեխաները շնորհիւ վատ կերակուրի, վատ
ապրուստի, կամ երբ ծնողները բարակացաւ,
ունեն:

Մըսելը նոյնպէս շատ երկիւղալի հիւան-
դութիւն չէ: Ի հարկէ, սաստիկ մրսելուց ել
մարդ կարող է ուրիշ ցաւեր ստանալ, օր

ոսկրացաւ, բորբոքումն, բկացաւ և ալլր
բայց այնուամենալինիւ մըսելը վարակիչ և
կաչող չէ: այս մասին վարդան բանական բանակ
Ուրեմն վատ հիւանդութիւն ունեցողի
մասին չէ կարելի ասել, թէ նա մըսած է:
Ի հարկէ, վատ հիւանդութեան ժամանակ էլ
կարելի է մրսել, բայց բանի էութիւնը մըս
սելու մէջ չէ, այլ վատ հիւանդութեան վա-
րակիչ յատկութեան մէջ:

Եթէ տան մէջ կամ առհասարակ շուրջը
չըկայ ոչ մի վարակիչ հիւանդ, ինչքան
ուղում ես մըսիր, դրանից վատ հիւանդութիւն
առաջ չի գայ:

Եթէ մարդիկ չըգիտեն, թէ ինչով են ի-
րենք հիւանդ, պէտք է դիմեն հասկացող
մարդկանց, բժշկներին, կարելի է դիմել և
փելգշերներին, եթէ մօտերքում բժիշկ չը
կայ:

Իսկ վատ հիւանդութիւնը յայտնելուց
լետոյ պէտք է ինչքան կարելի է շուտ
բժշկւել:

Սւելի լաւ է բժշկւել հիւանդանոցնե-
րում: Մի կողմից ընտանիքը պահպանած
կը լինի, իսկ միւս կողմից հիւանդը աւելի
լաւ կը բժշկւի, որովհետեւ հիւանդանոցնե-

բում բոլոր գեղերը պատրաստ են և տրւում
են հիւանդներին իր ժամանակին: Բացի գը-
րանից այնտեղ մաքրութիւն է պահպանում: Ալդպիսի հիւանդներին պէտք է յաճախ լո-
ղացնել, իսկ տանը այդ անել դժւար է լի-
նում աղքատութեան և աշխատանքի զտու-
թեան պատճառով:

Իսկ եթէ չըկան հիւանդանոցներ, կամ
այնտեղ ալդպիսի հիւանդներին չեն ընդու-
նում, ոչինչ, պէտք է բժշկել տանը: Հար-
կաւոր է միայն բարձի թող չ'անել և հիւան-
դութիւնը նկատելուն պէս, երբ դեռ ուրիշ-
ներն չեն վարակւել, իսկոյն դիմել բժշկին,
ուշադրութեամբ լսել նրա բոլոր խորհուրդ-
ները և գեղերը գնել: Երբ բոլոր գեղերը կը
վերջանան, իսկոյն գարձեալ գնալ բժշկի մօտ,
և ալդպիս շարունակել մինչեւ, որ մարդ բո-
լորովին չ'առողջանայ:

Դրանից վատ բան չըկալ, երբ հիւանդը
դիմելով բժշկին և մի փոքր առողջ զգալով
իրեն, չէ շարունակում բժշկել. կը նշանա-
կէ նրա գեղերը բոլորովին անօգուտ անցան
և ինքը հիւանդը, ոչ մի օգուտ չըստանա-
լով, վարակում է ու վարակում իր ընտանիքը:
Յաճախ վատ հիւանդութիւն ունեցողնե-

ը դիմում են բժշկւելու ջատուկներին (Փալ-
չիներին) և շատերը հաւատացնում են, իբր
թէ նրանք օգուտ են. բայց ահա թէ բանը
ինչումն է. իրաւ է, լինում են երեմն ջա-
տուկ կանաչք, որոնք մի քանի գեղերի հետ
ծանօթ են լինում, բայց նրանք չեն կարո-
ղանում որոշել ոչ գեղերի քանակութիւնը,
թէ ինչքան պէտք է տալ հիւանդին, և ոչ
էլ հիւանդութիւնը: Նատ անգամ պատահում
է, որ ջատուկի բժշկութեան շնորհիւ հիւան-
դը թուլանում է և նրա ատամները փչա-
նում են: Այդ գրութեան մէջ արգէն բժիշ-
կըն էլ կը դժւարանալ առողջացնել նրան:
Ջատուկը, յաճախ հիւանդութիւնը չ'որշե-
լով, ջրջրուկը բժշկում է վատ հիւանդու-
թեան գեղերով, իսկ վատ հիւանդութիւնը
ջրջրուկի գեղերով: Դրանով նա օգնութիւն
չէ հասցնում, իսկ վնաս ինչքան կ'ուզես:

Ահա թէ ինչքան սարսափելի է վատ հի-
ւանդութիւնը—սիփիլիսը, և ահա թէ ինչ-
պէս պէտք է ամեն մէկը իրեն պահէ, որպէս
զի կարելովն չափ քիչ տարածւի այդ ցաւը
և չ'անբաղդացնէ ախալիսի մեծ քանակութիւ-
նով թէ չափահատներին և թէ փոքրերին:



յարաբերութիւն ունենալ մի ուրիշ կնոջ հետ:
Անառակ կեանք վարելով մարդ գժեաղ-
դացնում է իրեն և անառակութիւնը տարա-
ծում է մարդկանց մէջ: Եթէ մարդը կնոջ
հետ ապրէր միասին ինչպէս հարազատ ա-
մուսին և երբէք չըթողնէր նրան, աչք ու-
նենալով ուրիշի վրայ, այդ դէպքում անա-
ռակութիւնը չէր տարածւի աշխարհին երե-
սին: Կատ ժամանակ մարդիկ զւարճութեան
համար բացի իրենց կնոջից յարաբերութիւն
են ունենում ուրիշ կանոնց հետ և այդպի-
սով իրենք ել են անառականում, այն կա-
նոնց էլ են անբարութականացնում: Մեր ժա-
մանակներում տնտեսակութիւնը այն աստի-
ճանի է հասել, որ քաղաքներում կան հա-
զարաւոր կանալք, որոնց հետ տղամարդիկ
յարաբերութիւն են ունենում ոչ թէ ընտա-
նեկան կեանքի համար, այլ փողով անառա-
կութեան համար: Քաղաքներից անառակու-
թիւնը տարածում է զիւղերում և տարեց
տարի աւելի և աւելի շատանում է: Մանա-
ւանդ աւելի շատ տարածում են գինուրները և
մշակները: Նրանք, զնալով քաղաքներ, թող-
նում են իրենց մատաղահաս կանանց ուրիշ-
ների գալթակղութեան, իսկ իրենք քաղաք-

ՎԵՐԶԱԲԱՆ.

Սկս գըքոյկի մէջ նկարագրւած է վատ
հիւանդութիւնը և տրւած են խորհուրդներ,
թէ ինչպէս պահպանւել և ազատւել նրա-
նից: Բայց բացի դրանից ամեն մարդ պէտք
է իմանայ, որ այն տիտր, որի մասին այս-
տեղ գրւած է, ոչ մի ժամանակ այդպէս չէր
տարածւի և չէր դժբաղդացնի այսքան մարդ-
կանց, եթէ միայն նրանք Աստւածավախ
կեանք վարէին և չըքանդէին նրա կարգա-
դրած ամուսնական օրէնքը:

Աստւած մարդուն և կնոջը միացը միացը էլ է
մարդկութեան սերունդը շարունակելու հա-
մար: Ուստի և մարդ պէտք է տարի կնոջ
հետ միայն սերունդ առաջացնելու համար,
այն ինչ մարդիկ այդ կատակցութիւնը դարձ-
րել են իրենց համար զւարճութիւն: Բնու-
թիւնը ստեղծել է կնոջը ոչ թէ մարդկանց
զւարճութեան առարկայ լինելու համար, այլ
երեխաներ ծնելու և նրանց կրթելու, ուստի
և տղամարդը պէտք է ամուսնական կեանք
վարէ միայն իր կնոջ հետ և ընտանեկան բաղ-
դրաւորութեան համար նա երբէք չըպէտք է

ներում են անառակ կեանք վարում։ Այնտեղ
քաղաքներում կան այնպիսի տներ, որտեղ
կարելի է աժան և հեշտ հարթել և անառա-
կութիւններ տնել։ Թէ այդ տներում, և թէ
ուրիշ տեղերում մարդկի վարակւում են այդ
սարսափելի վատ հիւանդութիւնից, ու յետոյ
տարածում են գիւղերում և ալդպիսով ան-
բաղդացնում են իրենց բոլորովին անմեղ հա-
րազատներին ու դրացիներին։

Աժան չէ նստում մարդու վրա! Աստու-
ծոյ այդ օրէնքի խախտելը և մարդ վերջը
հնձում է իր մեղքի պառզը։ Բայց չըկայ
չափ ու սահման Աստուծոյ բարերարութեան,
«Զեկեալն առ իս ոչ հանից արտաքս» (Ինձ
մօտ եկողին չեմ արտաքսի) ասում է Քրիս-
տոսը։ Եթէ Աստւած երեսը չէ դարձնում մե-
ղանչողից, ուրեմն մենք, մարդիկս, նոյնպէս
իրաւունք չունենք մեղադրել մեր եղբայրնե-
րին, արհամարհել և թողնել նրանց առանց
օգնութեան, մանաւանդ որ ինչպէս այս
գրքում ցոյց է տւած, շատերը ոչ թէ իրենք
են լինում իրենց հիւանդութեան պատճառը։
այլ հիւանդանում անգիտակցարար կամ ան-
գուշութիւնից։

- | | | | |
|----|--------------------------|---|----|
| 1. | Յովհաննէս Հուս (սպառլած) | 5 | կ. |
| 2. | Եանկօ Երաժիշտ (սպառլած) | 2 | » |
| 3. | Շառատ | 5 | » |
| 4. | Վատ Հիւանդութիւն | 3 | » |

ԳԻՆՆ Է Յ ԿՈՊ.

3136

501

2013



